



Grant Thornton

An instinct for growth™

Հարկային տեղեկագիր

Հարկային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների ուղեցույցի վերաբերյալ

Հարկային տեղեկագրի սույն համարում Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ին կայացած նիստի ընթացքում հավանության արժանացած հարկային եվ մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների ուղեցույցի հիմնական եվ առանցքային որոշ դրույթներ, որոնք ուրվագծում են ՀՀ կառավարության, ինչպես մոտ ապագայում, այնպես էլ հեռանկարում, հարկային օրենսդրության առնչությամբ իրականացվելիք փոփոխությունները եւ դրանց հիմքում ընկած սկզբունքները:



Հարկային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների հիմնական եւ առանցքային դրույթները

Ուղեցույցի շրջանակներում հարկային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքները մշակվել են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2012-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը՝ կարևորելով հատկապես նշյալ ծրագրի՝ պետական եկամուտների քաղաքականությանն առնչվող մասով ամրագրված՝ հետևյալ երկու կարևորագույն նպատակադրումները.

- 1) առաջիկա տասնամյակի ընթացքում ռեսուրսային շրջանակի ընդլայնման հիմնական աղբյուր պետք է հանդիսանան հարկային եկամուտները, իսկ հարկեր/համախառն ներքին արդյունք հարաբերակցությունը մինչև 2025 թվականի ավարտը պետք է կազմի շուրջ 27-28 տոկոս,
- 2) հարկային և մաքսային վարչարարության բարելավումը պետք է դիտարկվի որպես գործարար և ներդրումային միջավայրի առաջիկա բարեփոխումների գերակայություն:



Հարկային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների հիմնական եւ առանցքային դրույթները

Համաձայն մշակված փաստաթղթի հարկային օրենսդրության վերանայման ռազմավարությունը միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում հիմնվելու է հետևյալ ութ հիմնական սկզբունքների վրա.

1. Հարկային արտոնությունների կրճատում ու հարկման բազայի ամրապնդում (հարկման հորիզոնական արդարության սկզբունքի ամրապնդում).

- Նախատեսվում է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտների՝ շահութահարկով կամ եկամտային հարկով հարկումից ազատման արտոնության վերացում,
- Նախատեսվում է տնտեսության ֆինանսական ոլորտում մատուցվող մի շարք ծառայությունների ավելացված արժեքի հարկով հարկում (հիշեցնենք, որ ներկայումս այդ ծառայությունները ազատված են ԱԱՀ-ից),
- Նախատեսվում է ռեզիդենտ կազմակերպությունների ինչպես նաև ռեզիդենտ ել ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ստացված շահաբաժինների հարկում,

- Նախատեսվում է գանձապետական պարտատոմսերից ֆիզիկական անձանց կողմից ստացվող տոկոսի հարկում (եկամտային հարկով):

2. Հարկման ուղղահայաց արդարության սկզբունքի ամրապնդում.

Հարկման ուղղահայաց արդարության սկզբունքի ամրապնդման հիմնական ուղղությունը լինելու է՝ տեսանելի հարստության կամ շքեղության՝ առավել մեծ չափերով հարկումը: Տեսանելի հարստության կամ շքեղության հարկման գործուն մեխանիզմի ստեղծման համար իրականացվելու է անշարժ գույքի միավորների գանգվածային և պարբերաբար վերագնահատումներ՝ նպատակ ունենալով վերջիններիս կադաստրային արժեքները հնարավորին չափ մոտեցնել դրանց շուկայական գներին և դրանով իսկ ընդլայնել գույքային հարկերի հարկման բազան:



Հարկային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների հիմնական եւ առանցքային դրույթները

3. Գործարար միջավայրի բարելավում

Գործարար միջավայրի բարելավման հիմնական ուղղություններն են հանդիսանալու.

- ԱԱՀ-ի հաշվարկներով առաջացող պայմանական գերավճարները (դեբետային մնացորդները) որոշակի ժամանակահատված հետո հարկ վճարողներին վերադարձնելու ընթացակարգերի սահմանումը,
- ԱԱՀ-ի գծով պարտավորության հաշվարկման միասնական սկզբունքների ամրագրումը, մասնավորապես, խոսքը վերաբերում է ԱԱՀ-ի պարտավորության առաջացման եվ ԱԱՀ-ի հաշվանցման իրավունքի ձեռքբերման վերաբերյալ միասնական մոտեցման կիրառմանը (երկու դեպքում էլ պետք է կիրառվի հաշվեգրման սկզբունքը),
- Ներմուծման ժամանակ մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգման համակարգի կատարելագործումը,
- Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի գանձումը մաքսային սահմանից

փուլ առ փուլ դեպի հանրապետության ներքին տարածք տեղափոխելու հնարավորությունների ուսումնասիրությունը և գնահատումը:

4. Հարկման դրույքաչափերի օպտիմալացում

Հարկման դրույքաչափերը պետք է սահմանվեն այնպես, որպեսզի`

- հարկային բեռը ընդունելի լինի ձեռնարկատիրական գործունեության շահութաբերության համատեքստում,
- դրանք հնարավորինս ներդաշնակ լինեն ԱՊՀ և այն երկրներում կիրառվող դրույքաչափերի հետ, որոնք, ըստ համապատասխան ոլորտների, հանդիսանում են Հայաստանի Հանրապետության մրցակիցներ,
- այն ապրանքները, որոնց նկատմամբ պահանջարկի գնային ճկունությունը հարաբերականորեն ցածր է և որոնք չեն հանդիսանում առաջնային սպառման ապրանքներ (հիմնականում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ` ակոհոլային խմիչքներ, ծխախոտի արտադրանք), հարկվեն հարաբերականորեն ավելի բարձր դրույքաչափերով:

Հարկային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների հիմնական եւ առանցքային դրույթները

5. Հարկային վարչարարության պարզեցում և ընթացակարգերի կատարելագործում


Հարկային վարչարարության պարզեցման և ընթացակարգերի կատարելագործման հիմքում դրվելու են.

- օրենսդրական դրույթների պարզեցումը, երկհիմաստությունների ու անորոշությունների վերացումը,
- հարկ վճարողների վարչարարական բեռը չավելացնող հարկման մեթոդների շարունակական կիրառումը (մեթոդներ, որոնք չեն ընդլայնում հարկային մարմինների հետ շփումները, չեն մեծացնում հարկային հաշվառման վրա ծախսվող ռեսուրսները և հարկային մարմնից պահանջում են նվազագույն ռեսուրսների ծախս):

6. Երկարաժամկետ հեռանկարում հարկային համակարգի առավելագույն կայունության ապահովում

Վերոնշյալ ենթատեքստում ՀՀ կառավարությունը կարելի է հարկային համակարգում հաճախակի փոփոխությունների կատարումից հնարավորինս ձեռնպահ մնալը (հատկապես, եթե այդ փոփոխությունների իրականացումից էական բարելավումներ չեն ակնկալվում և դրանք պայմանավորված չեն պետության շահերի պաշտպանության անհետաձգելիությամբ)՝ հաշվի առնելով այն, որ նման փոփոխությունները անհարմարություններ են ստեղծում ոչ միայն հարկ վճարողների, այլ նաև հարկային մարմինների համար:





Հարկային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների հիմնական եւ առանցքային դրույթները


7. Հարկային համակարգում փոփոխությունների ընթացքի մշտադիտարկումը և հրապարակայնություն

Այս սկզբունքի շրջանակներում ՀՀ կառավարությունը նախատեսում է հարկային համակարգում կատարվող բարեփոխումները (այդ թվում՝ օրենսդրական)՝ դրանց արդյունավետության գնահատման նպատակով, ուղեկցել՝

- կատարողական ցուցանիշների համակարգի մշակմամբ և ներդրմամբ,
- կատարողական ցուցանիշների միջոցով ձեռնարկված միջոցառումների արդյունավետության դիտարկմամբ հարկային ծառայողների գործողությունների կամ անգործության դեմ բողոքարկման արտադատական համակարգի կատարելագործմամբ առաջարկվող օրենսդրական փոփոխությունների հրապարակայնության ապահովմամբ:

8. Հարկային համաձայնագրերի շրջանակի ընդլայնում.

Նախատեսվում է նոր միջազգային հարկային հարաբերություններ կարգավորող համաձայնագրերի կնքումը և կիրառությունը:



Հետադարձ կապ

Լրացուցիչ պարզաբանումներ
ստանալու նպատակով կարող եք
կապ հաստատել մեզ հետ

«Գրանթ Թորնթոն Լիգալ ընդ Թաքս» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան 0010

Վ. Սարգսյան փող. 10, 1-ին հարկ, թիվ 109 գրասենյակ

+374 (10) 54 51 49

legal@am.gt.com



Այս հրապարակման մեջ նկարագրված հարցերը նախատեսված են ընդհանուր
ներկայացման և քննարկման համար: Վերջիններս նախատեսված չեն և չպետք է
օգտագործվեն որպես ցանկացած կոնկրետ հարցի վերաբերյալ իրավաբանական
խորհրդատվություն:



Հակոբ Թադևոսյան

Բաժնետեր տնօրեն

T +374 (10) 54 51 48

E hakob.tadevosyan@am.gt.com



Դավիթ Հարությունյան

Բաժնետեր

T +374 (10) 54 51 48

E davit.harutyunyan@am.gt.com

© 2013 «Գրանթ Թորնթոն Լիգալ
ընդ Թաքս» ՍՊԸ: Բոլոր
իրավունքները պաշտպանված են:

«Գրանթ Թորնթոն» անվանումը,
կախված համատեքստից, պետք է
ընկալվի կամ հաճախորդներին
առաջարկական, հարկային և այլ
խորհրդատվական ծառայություններ
մատուցող և համաշխարհային
միևնույն ցանցին անդամակցող
կազմակերպությունների
միասնական ապրանքային նշան
կամ վերոնշյալ ցանցին
անդամակցող որևէ
կազմակերպություն: «Գրանթ
Թորնթոն Լիգալ ընդ Թաքս» ՍՊԸ-ն
նույնպես մասն է կազմում Գրանթ
Թորնթոն Ինթերնեշլ
կազմակերպության կողմից
ղեկավարվող վերոնշյալ
համաշխարհային ցանցի, որը չի
հանդիսանում իրավաբանական
անձանց ընկերակցություն: Նշված
ցանցին անդամակցող և անմիջապես
ծառայություններ մատուցող
կազմակերպություններից
յուրաքանչյուրն, ինչպես նաև Գրանթ
Թորնթոն Ինթերնեշլ
կազմակերպությունն, օժտված
լինելով առանձին
իրավասուլեկտությամբ,
պատասխանատվություն են կրում
միայն իրենց գործողությունների կամ
անգործության համար և չեն կարող
ստանձնել պարտավորություններ
մեկը մյուսի փոխարեն, այդ թվում՝
գործակալության հիմունքներով:
Մանրամասների համար այցելեք
www.gtlegal.am